

ՊԵՏՐՈՍ Ն. ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅԱՆ ՆԱՅ ԲՅՈՒԶԱՆԴԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԻՄՆԱԳԻՐ

Նայ պարմագիրական միտքը բավականին ուշացումով է զբաղվել բյուզանդագիտության հարցերով, այն էլ հայ-բյուզանդական հարաբերությունների կապակցությամբ: Միայն անցած դարի կեսերին է, որ բյուզանդագիտությունը որպես ինքնուրույն գիտական համակարգ դառնում է ուսումնասիրության առարկա: Այս բնագավառում հայրկապես առանձնանում են Նր. Մ. Բարթիկյանը, Կ. Ն. Յուզբաշյանը, Վ. Ա. Նարությունովա-Ֆիդանյանը, Վ. Կ. Իսկանյանը, Սիյուրբում՝ Ս. Մ. Տեր-Ներսեսյանը, Ն. Գ. Գարսոյանը և էլի մի քանիսը: Բյուզանդական բազմաթիվ սկզբնաղբյուրներ հայերենով լույս տեսան Ն. Մ. Բարթիկյանի թարգմանությամբ և հմտալից ծանոթագրություններով: Տվյալ ասպարեզում աշխատանքները այսօր էլ են շարունակվում և, բնականաբար, այս բոլորը նպաստավոր ազդեցություն ունեցան հայբյուզանդագիտության զարգացման համար: Սակայն չպետք է մոռանալ, որ ժամանակակից հայ բյուզանդագիտության ակունքները հենվում են ականավոր պարմաբան Նիկողայոս Ադոնցի համապարասխան ուսումնասիրություններում զարգացված տեսակետների ու տեսությունների վրա:

Ն. Ադոնցը լայն առումով հայագետ էր, նրան զբաղեցրել են այս համակարգի համարյա բոլոր կողմերը (պարմություն, աղբյուրագիտություն, գրականություն, լեզու, քերականություն, արվեստ, հրապարակախոսություն և այլն) Սակայն, նա նաև բյուզանդագետ էր և համաշխարհային գիտական հանրությանը առավելապես հայտնի էր իբրև բյուզանդագետ: Եւ դա իրոք այդպես է, քանի որ, զբաղվելով հայրենի պարմությամբ, Ն. Ադոնցը գրեթե միշտ աչքի առաջ է ունեցել նրա բյուզանդական աղերսները: Ավելի սպույզ ասած՝ նա անընդհատ փնտրում էր միաժամանակ եւ՝ «Բյուզանդիան»՝ Նայաստանում», եւ՝ «Նայաստանը՝ Բյուզանդիայում», քաջ գիտակցելով, թե որքան միաեղանակ էին նրանց ճակատագրերը: Եւ նույնիսկ այնպեղ, որպեղ նման աղերսներ գտնել անհնարին էր թվում, նա եւս մեկ անգամ ապացուցում էր բյուզանդական իրողությունների իմացության անհրաժեշտությունն ու շահեկանությունը, վերականգնելով, օրինակ, բյուզանդական բերդամրցների անվանումների և տրեղադրության հիման վրա **Ուրարպուի** պարմական քարտեզի որոշ տարրեր¹:

Բյուզանդագիտական հոյակապ պարրաստվածությունը Ն. Ադոնցի գույր անձնական նվիրվածության հետեւանքը չէր: Նրան վիճակվել է մուրք գործել պարմական ուսումնասիրությունների ոլորտն այն ժամանակ, երբ աներեւակայելի արագությամբ ձեւավորում և սկսում է պողաբերել ռուսական բյուզանդագիտությունը, որի օրրանը հենց Ն. Ադոնցի alma mater Ս. Պետերբուրգի համալսարանն էր: Այսպեղ եռանդով գործում էր Վ. Գ. Վա-

1 Ն. Ադոնց, Երկեր հինգ հատրում, հատ. Դ, Երեւան, 2009, էջ 63, 65 և այլուր:

սիլեսկին, որը կարդացել է բյուզանդագիտական առաջին համալսարանական դասընթացները, սկսել այս մասնագիտության վերաբերյալ աշխատություններ հրապարակել իր ղեկավարած «Ժողովրդական կրթության նախարարության հանդեսում», Ս.Պերերբուրգի համալսարանի «Տեղեկագրում», ապա, 1894 թ. հիմնում է «Византийский Временник» օրաթերթը, որը կարճ ժամանակամիջոցում ձեռք բերեց համաերազանյան հեղինակություն: Վ. Գ. Վասիլեսկին իր շուրջը հավաքեց բյուզանդագետների մի հիստորիկ համապատասխան (Վ. Է. Ռեզել, Պ. Վ. Բեզոբրազով, Վ. Ն. Բենեշևիչ, Ա. Ա. Վասիլև, Ֆ. Ի. Ուսպենսկի, Յու. Ա. Կուլակովսկի, Բ. Ա. Պանչենկո, Ն. Պ. Կոնդակով և բազում այլք), որն սպանալու էր «Պերերբուրգյան դպրոց» անվանումը: Ճակատագրի բերումով ցրվելով աշխարհով մեկ, նրանք իրենց հետքերը ամենուրեք տեսնում են դպրոցին հատուկ հետազոտական ներշնչանքը և, միաժամանակ, գիտական ճշգրտությունն ու նրբությունը: Վ. Գ. Վասիլեսկին շատ կարևորում էր նաև բյուզանդագիտության կապերը հարակից ոլորտների, հատկապես՝ արևելագիտության հետ: Պերերբուրգյան արևելագիտությունը շարժվում էր ընդառաջ, բարձր Վ. Ռ. Ռոզենը և նրա աշակերտներ՝ Ա. Ա. Վասիլևը, Ն. Մառը և ուրիշներ շրջանառության մեջ են դնում արևելյան (արաբական, հայկական, վրացական ևն) աղբյուրները, որոնք անմիջապես գրավում են բյուզանդագետների ուշադրությունը²:

Ահա այս հագեցած և բեղմնավոր մթնոլորտում են ձևավորվում երիտասարդ Ադոնցի գիտական հետաքրքրությունները և հետազոտական հմտությունն ու ճաշակը: 1899 թ. օգոստոսին, համալսարանի պարմաբանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների բաժանմունքն ավարտելուց հետո, նա մեկնում է Մյունխեն: Այստեղ էս նա բարեբախտություն է ունենում շփվելու այնպիսի մի անձնավորության հետ, ինչպիսին էր Կարլ Կրումբախերը՝ Մյունխենի համալսարանի հրգակավոր բյուզանդագիտական սեմինարի ղեկավարն ու երազական առաջին բյուզանդագիտական հանդեսների հիմնադիրը («Byzantinische Zeitschrift», Լայպցիգ, 1892-ից ի վեր և «Byzantinische Archiv», Լայպցիգ, 1898-ից): Այդ ժամանակ արդեն լույս են տեսել Կ. Կրումբախերի՝ մինչ օրս անփոխարինելի մնացող բյուզանդական գրականության սովորաձավալ պարմությունը³, ինչպես նաև «Kasia» գրքույկը⁴, որի ազդեցությամբ Ն. Ադոնցը հեղինակում է իր անդրանիկ բյուզանդագիտական հոդվածը՝ «Կասիա միանձնուհին և հայերը»⁵:

1900 թ. հոկտեմբերին Ն. Ադոնցը փեղափոխվում է Փարիզ, որտեղ ունկնդրում է Լուսի մի «անմահի»՝ Սորբոնի համալսարանի բյուզանդագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Շառլ Դիլի «Բյուզանդիայի պարմություն» դասընթացը: Երիտասարդ պարմաբանի վրա մեծ փափվորություն է թողնում Շ. Դիլի այդ օրերին լույս տեսած «Հուստինիանոսը և բյու-

2 Տե՛ս Գ.Լ.Կրբատով, История Византии (историография), Ленинград, 1975, էջ 106-122, И.П.Медведев, Некоторые размышления о судьбах русского византиноведения. - "Исторические записки", 3(121), М., 2000, էջ 30-37:

3 Geschichte der byzantinischen Literatur von Justinian bis zum Ende des oströmischen Reiches (առաջին հրապարակություն՝ 1891 թ., երկրորդը, շատ ավելի ընդլայնվածը՝ 1897-ին, Արևրար Երևարդի և Հայնրիխ Գեյցերի համահեղինակությամբ):

4 Տե՛ս Կ.Կրumbacher, Kasia, Sitzungberichte der Bayerischen Akad. D. Wiss., Philos.-philol. Und histor. Kl., 1897, էջ 305-370:

5 Տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1901, թ. 5-6, էջ 129-132:

զանդական քաղաքակրթությունը» կոթողային մենագրությունը⁶: 1901-1902 թթ. Ն. Ադոնցը շարունակում է իր ճանապարհորդությունը՝ այցելելով Լոնդոն և Վիեննա, ծանոթանալով ժամանակի հռչակավոր գիտնականների, որոնց թվում էր նաև քրիստոնեության պարմության այնպիսի մի գիտնական, ինչպիսին էր Ֆրեդերիկ Կ. Կոնիքերը, որը շարք էր կարևորում առարկային վերաբերող հայկական աղբյուրները: Ներգրվելով վճռական է դառնում Ն.Ադոնցի շրջադարձը դեպի բյուզանդագիտություն, արագձևեր են կուրակվում ապագա մագիստրոսական թեզի համար: Ն.Մառին ուղղված նամակներից⁷ պարզվում է, որ թեզի համար նա, երկրասարդությանը հաջորդելով խիզախությամբ, ընտրել էր «Նայաստանի պարմությունը և հայերի ճակարագիրը Բյուզանդիայում» անձայրածիր թեման՝ ցանկանալով քննության նյութ դարձնել Է.-Ը. դարերի իրողությունները: Ժամանակի ընթացքում թեման, բնականաբար, մասնավորվեց՝ թեզի խորագիրը սահմանափակվեց Զ. դարով, այսինքն՝ Նուսրինիանոս I-ի օրերով:

1908 թ. Ս. Պերերբուրգում լույս տեսավ ըստ էության բյուզանդագիտական «Նայաստանը Նուսրինիանոսի դարաշրջանում» մենագրությունը⁸, որը 1909 թ. ապրիլի 5-ին որպես մագիստրոսական թեզ ներկայացվում է հրապարակային պաշտպանության:

Նայսին է, որ Ն. Մառը խրախուսում էր հարկապես իր այն սաներին, որոնք զբաղվում էին աղբյուրագիտական, բնագրագիտական, լայն առումով՝ բանասիրական խնդիրներով: Նանգամանք, որ շեշտում է ինքը՝ Ն. Ադոնցը 1909 թ. սկզբներին Գ-ր. Խալաթյանցին ուղղված իր նամակում. «Ձեզ հայրնի է, որ Մառը այսպիսի հարցերով պարսպելը վաղաժամ է համարում և գովեստներ նրանից սպասել չի կարելի»⁹: Սակայն սույն աշխատանքը կատարված էր գիտական այնպիսի հմտությամբ, այնպիսի ոգևորությամբ և մտքի թարմությամբ, որ Մառը հիացական կարծիք է հայտնում իր սանի թեզի վերաբերյալ¹⁰: Իսկ նշանավոր բյուզանդագետ Ա. Ա. Վասիլևը Ադոնցի մենագրությանը նվիրված իր գրախոսականում գիտական հանրությանը շնորհավորում է բյուզանդագիտությունը հարստացնող նոր աշխատության փառաբանության առթիվ¹¹:

Որպես բյուզանդագետ Ն.Ադոնցն իրեն լիովին դրսևորեց 1920-1930-ական թվականներին՝ նախ Փարիզում բնակվելու (1921-1931 թթ.)¹², ապա՝ Բրյուսելի Ազատ համալսա-

6 Ch.Diehl, Justinien et la civilisation Byzantine au 6. siecle, Paris, 1901.

7 Տե՛ս «Նիկողայոս Ադոնցի նամակները Կարապետ Եզյանին և Նիկողայոս Մառին», հրապարակության պարբերական Պ. Ն. Նախրյանը. «Էրաբեր», ԳԱ հասարակ. գիտ., 1975, թ. 11, էջ 92-111:

8 Տե՛ս **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя, СПб., 1908.

9 Տե՛ս **Պ. Նուսրինիայան**, Նիկողայոս Ադոնցի անդիպ նամակներից, «Բաները Երեսանի համալսարանի», 1988, թ. 3, էջ 100:

10 Տե՛ս **Н. Я. Марр**, Выступление на защите диссертации Н.Адонца Армения в эпоху Юстиниана (текст выступления и материалы к нему, 1908 г.). - Архив Н.Я.Марра, А-996, СШЦп. **В. А. Миханкова**, Николай Яковлевич Марр, М.-Л., 1949, էջ 165:

11 **А. А. Васильев**, «Журнал Министерства народного просвещения», 1910, февраль, էջ 412-418.

12 Այդ ժամանակամիջոցում Ն. Ադոնցը մի շարք հոդվածներ է հրապարակում երոսական տարբեր գիտական հանդեսներում. «Revue de l'Orient Chrmtient, Paris, 1924, t.24, 1925-1926, t. 25, 1927-1928, t.26. «Armeniaca», Leipzig,

բանում դասավանդելու շրջանում (1931-1940 թթ.): Այն ժամանակ, երբ Ն. Ադոնցը փախչում էր Բրյուսել, Բելգիայում արդեն վաղուց գործում էր բյուզանդագիտական մի պատկանելի դպրոց: 1837 թվականից սկսած այսպիսի ճիգովի Յան վան Բոլանդի հետազոտությունների՝ բոլանդիստների հոգածությամբ լույս է տեսնում սովորապես սրբախոսական մատենաշարը՝ «Acta Sanctorum», իսկ 1882 թ. հետո դրան զուգակցեց նույն առարկային նվիրված «Analecta Bollandiana» գիտական հանդեսը: Ն. Ադոնցի ժամանակակիցներ էին երկու հոգակավոր բոլանդիստ հայերը՝ գիտական սրբախոսության հիմնադիր Իսապիտ Դելեն, և Պաուլ Պերերսը, որը հաջորդում էր արևելյան, այդ թվում նաև հայկական նյութը:

Ի. դարի սկզբներին Բրյուսելում կազմակերպվեց նաև «Բյուզանդագիտության բելգիական ընկերությունը», որը 1924 թվականից սկսյալ հրապարակում է «Byzantion» պարբերականը: Բրյուսելի Ազատ համալսարանում համբավված բյուզանդագետ Անրի Գրեգուարի ջանքերով 1930-1931 թթ. հիմնադրվեց Արևելյան և սլավոնական բանասիրության ու պատմության ինստիտուտը, որն առավելապես զբաղվում էր բյուզանդագիտությամբ: Ա. Գրեգուարի նախաձեռնությամբ ու շնորհիվ է, որ 1931 թ. նոյեմբերին ինստիտուտում ստեղծվեց հայագիտության ամբիոն, որի վարիչ հրավիրվեց Ն. Ադոնցը: Բելգիացի հայերի հայագետ Ժերար Գարիսը վկայում է, որ Ն. Ադոնցն իր բյուզանդագիտական ու արևելագիտական կրթության և հարկապես հայկական աղբյուրների հիմնալի խնայության շնորհիվ մեծապես օգտակար եղավ Անրի Գրեգուարին ու նրա գործընկերներին. «Ադոնցի հասարակվելը Բրյուսելում նշանավորվեց հայ-բյուզանդական հարաբերություններին նվիրված բազմաթիվ ծանրակշիռ ուսումնասիրությունների պատրաստմամբ և հրապարակմամբ»¹³:

Պատմաբանը իսկույն եւեթ սկսեց աշխատակցել ինչպես «Byzantion» հանդեսին, այնպես էլ «Annuaire de l'Institut de philologie et d'histoire Orientales et Slaves» տարեգրքին: Նշված հանդեսներում լույս տեսան նրա բյուզանդագիտական 20-ից ավելի հիմնալի ուսումնասիրությունները Հայաստանի և Բյուզանդիայի առանձին անվանի գործիչների ու ընտանիքների մասին, ինչպես, օրինակ՝ Մավրիկիոս, Կոստանդին V, Լեոն V Հայկազն, Վասիլ I, Հովհաննես Չմշկիկ կայսերին, կայսրուհի Թեոդորային, կեսար Վարդ Մամիկոնյանին, Բուղարիայի թագավոր Սամուել Հային, Հայոց թագավորներ Աշոտ II Երկաթին և Աշոտ III Ողորմածին, Կիլիկիայի իշխանապետ Ռուբեն I-ին, Տայքի կյուրապաղապ Դավթին, նշանավոր գորավարներ Նիկեփորասին և Փիլարպոսին, հայ-բյուզանդական Տարոնացի, Թոմարիկ, Մխիթար, Դալասենոս, Թեոդորական ընտանիքներին, հայազն գիտնականներին (Լեոն Իմաստասեր, Բագրատ ասպրաբաշխ և ուրիշներ), բյուզանդացի բանաստեղծուհի Կասիա Միանձնուհուն, «Դիգենիա Ալքիրաս» դյուցազնավեպին և հարակից խնդիրներին նվիրված հոդվածները:

Ն. Ադոնցի դերը բյուզանդագիտության ընդհանուր պատմության մեջ փակավորված կա-

1927, fasc. II. «Revue des études Arméniennes», Paris, 1927, t.VII, 1928, t. VIII. «Byzantinische Zeitschrift», Leipzig, 1929-1930, No 29-30. «Revue des études indo-européennes», Paris, 1938, t.I. «Mémoires publiés par l'Académie royale de Belgique», Bruxelles, 1938 և այլն:

13 Տե՛ս G. Garitte, Préface, փոխ N. Adontz, «Études Armeno-Byzantines», Lisbonne, 1965, p.4, հմմտ. «Новый взгляд на историю Армении», сборник статей, посвященный творчеству Николая Адонца, под ред. Ю. Костянина, СПб., 2009, т.2 111-112:

րոպ է ուսումնասիրության: Առայժմ մենք չենք հավակնում ոչ միայն լուծել, այլև նույնիսկ շոշափել նման խնդիր: Կան, սակայն, անուրանալի փաստեր, որոնց վրա պետք է հրավիրենք ընթերցողի ուշադրությունը: Նախ, Ն.Ադոնցն առաջին հայ բյուզանդագետն էր: Մինչ նրա ասպարեզ գալը հայ պարմագիտությունը միայն հպանցիկ աղերսներ է ունեցել բյուզանդագիտության հետ: Առանձին հարցեր քննարկման նյութ են դարձել հայ ժողովրդի ընդհանուր պարմությանը նվիրված ուսումնասիրություններում (Մ.Չամչյան, Սրբ.Գրախոսական եռն)¹⁴, սակայն չկար մեկը, որ հետաքրքրությունների ծիրով հանդերձ ունենար պարզաճ մասնագիտական պարբերականություն և ճանաչված լիներ միջազգային գիտական հանրության կողմից:

Երկրորդն այն է, որ Ն. Ադոնցն ամենայն հնարավորն էր անում, որպեսզի ընդերպահնի ժամանակակից բյուզանդագետներին այն հանգամանքին, որ Բյուզանդիային վերաբերող հայկական աղբյուրները ոչ պակաս արժանի են ուշադրության, քան «դասական» եւրոպական կամ արևելյան լեզուներով գրվածները, իսկ երբեմն նույնիսկ նախընտրելի են: Շեշտելով Ն. Ադոնցի՝ գիտությանը բերած այս նորությունը, Ժ. Գաբրիել գրում է. «Անհնար է ձեռնամուխ լինել Եգիպտոսի, Ասորիքի, Նայասարանի կամ Վրաստանի միջնադարյան պարմության ուսումնասիրությանն առանց հիմնվելու բյուզանդական աղբյուրների վրա: Նմանապես անհնար է շարադրել Բյուզանդիայի պարմությունն առանց հաշվի առնելու դպրիական, ասորական, հայկական և վրացական աղբյուրները... Ն. Ադոնցը լայնորեն օգտագործում էր հայկական պարմիչներին, որոնց երկասիրությունների բնագրերը բյուզանդագետներից միայն քչերն էին ի վիճակի կարդալ: Armenia non legentur [«Նայերենը չեն կարդալու»] միայն խթանում էր նրա նախանձախնդրությունը»¹⁵:

Վերջապես, Ն. Ադոնցը անձնվեր պայքարում էր բյուզանդահայերի նկատմամբ այն ծայրահեղ բացասական վերաբերմունքի դեմ, որը հատուկ էր իր ժամանակի որոշ եւրոպական, և հատկապես՝ հույն բյուզանդագետների համար: Բյուզանդիան դիտելով որպես գույք հունական կայսրություն, այդ պարմաբանները հակված էին անպեսել երկրի կյանքում մյուս ժողովուրդների խաղաղաճ այնքան զգալի դերը: Ադոնցն ապացուցում էր հակառակը. «Բյուզանդիան, - գրում է նա, - ոչ Նոմնական կայսրություն մը պիտի ըլլա, ոչ Նունական կայսրություն մը: Ան պիտի ձեռացնէ լայն կազմակերպություն մը համաշխարհային բնույթով, գանազան ցեղերու և լեզուներու պարկանող ժողովուրդների համագործակցության վրա հիմնված, առանց ազգային նախապաշարման»¹⁶: «Դիզենիս Ալբիարաս» դյուցազներգությանը նվիրված հետազոտությունում նա հստակորեն բանաձևում է իր «հավատամքը». «Չնայած այն փաստին, որ Բյուզանդիայի պաշտոնական լեզուն հունարենն է, այն ամենևին էլ հույների կայսրությունը չէր»: Ուստի պետք է հրաժարվել ազգային նախապաշարմունքից և մեծամտությունից, և ի վերջո ընդունել, որ «Բյուզանդիան իր վեհությամբ պարբերական է իր կազմի մեջ ներգրավված ժողովուրդների արդյունավոր համագործակցությանը: Կայսրությանը դրանցից յուրաքանչյուրի մատուցած ավանդը և ծառա-

14 Տե՛ս **Կ.Տեր-Սահակյանի** «Նայ կայսերք Բյուզանդիոնի» երկասիրությունը (Վենետիկ, 1905), չնայած խորագրին, գիտական ուսումնասիրություն չէ:

15 G. Garitte, էջ 5-6.

16 Ն. Ադոնց, Երկեր, հատ. Բ, Երևան, 2006, էջ 48:

յությունները որոշելը կնպաստի վերջինիս բնույթի և նրա քաղաքակրթությունն ավելի լավ հասկանալու խնդրին»¹⁷: Այլ առիթով նա դարձյալ շեշտում է. «Բյուզանդականությունը, ինչ որ զանազանվում էր իր նախորդ քաղաքակրթությունից, պարսկական է այլևայլ ազգերի միահամուռ գործակցության միեւնոյն պերական օղակում: Որոշել այս կամ այն ազգային փառքի բերած նպաստը՝ նշանակում է լուսաբանել, հասկանալ բյուզանդականությունը»¹⁸: Նույն պարամբանները, - գրում է Ադոնցը, - շարունակ մի փեսակ նախապաշարմունքի գոհ են դարձել. նրանք կարծում են, որ Բյուզանդիան հույների կողմից կառուցած շենք էր, իսկ հայերն այնտեղ թափանցել ու հաստատվել են «որպես արկածախնդիրներ, որպես բախարի շփացած գավակներ, որպես թափառական ասպետներ, որոնք իրենց փառքն էին փնտրում մեծ ճանապարհներին: Ավելի սխալ բան հնարել հնարավոր չէ: Եթե հույները կայսրության անհերքելի փրկերն էին լեզվի և քաղաքակրթության միջոցով, ապա հայերը իրենց սրել-ծարար մարմնի և իրենց ազգին հատուկ ռազմական հանձնարի շնորհիվ գրավում էին այն ազգերի շարքում, որոնք ամենամեծ նպաստն էին մատուցել այն պահպանելու գործում»¹⁹: Ներկաբար, «հայերը Բյուզանդիային նույնքան հարազատ էին, որքան և հույները: Կայսրությանը մատուցած իրենց ծառայություններով և նվիրվածությամբ, ինչպես նաև իրենց փայլուն գործունեությամբ ու անօրինակ քաջությամբ, նրանք հանդես են գալիս իբրև Բյուզանդիայի պես բարդ կառույցի իսկական կերպողներ»²⁰: Իրոք, հայերին առաջնակարգ դեր է բաժին ընկել. Բյուզանդիայի պարսմության ամենաակնառու հերոսները կամ ծնունդով, կամ ծագումով հայեր էին: Նայերի խաղացած դերի մասին առավել վճռորոշ և ճշմարիտ վկայությունը փրամադրում են ոչ թե ազգայնամոլ կամ պարսմության կեղծարար ուսումնասիրողներն իրենց նեղմիտ մոտեցումներով, այլ ինքը՝ Բյուզանդիայի պարսմությունը²¹: Բյուզանդական սկզբնաղբյուրների բարեխիղճ և անկողմնակալ ընթերցումը ցույց է տալիս, որ «Նուսրինիանոսի օրից և նրա քաղաքականության հերեւանքով կայսրության դռները լայն բացվեցին հայության առաջ, առավելապես փրող դասի, ազնվականության: Իրար երեսից քաշվեցին արեւմուտք մանավանդ Արշակունի և Կամսարական փան ներկայացուցիչները

Արարական և Նովիաննես Արշակունիք, Ներսես, Տրախար և Իսահակ Կամսարական երեք եղբայրներ, Գլակ, Արարական, Վարագ, մի ուրիշ Նովիաննես, այլև Արշակ, Արարաշիր, Քանարանգես - ահա հայ ասպետության այն շարանը, որ իրենց այրումիով բյուզանդական գործի զարդն էին կազմում Նուսրինիանոսի օրով: Եւ հռչակավոր Ներսեսը, որ Նուսրինիանոսի պետության իսկական սյունն էր:

Նայ անունն արդեն դուրս է եկել իր նեղ ձորերից ու կիրճերից և թնդում էր մեծ պետության ծավալուն փարածության մեջ:

Նայությունը մի գետ է, որի ջրերը ոռոգում են ոչ միայն իր հարազատ հողն ու անդաստանը, այլև թավալում են հուժկու ալիքներ դեպի ընդհանուր քաղաքակրթության օվկիանոսը:

Արարական, Ներսես և նրանց շուրջը գործող հայ իշխանների պարսը, առաջին մեծ

¹⁷ Անդ, էջ 157-158:

¹⁸ Ն.Ադոնց, Երկեր, հատ. Ա, Երևան, 2006, էջ 438:

¹⁹ Ն.Ադոնց, Երկեր, հատ. Ե, Երևան, 2012, էջ 83, 173-174:

²⁰ Անդ, էջ 83:

²¹ Անդ, էջ 173:

ալիքներ էին, որ զարկեցին բյուզանդական արքունիքի պարտերին:

Նայասարանի լեռների այդ վայրի ծաղիկները պարավոր փեղ գրավեցին բյուզանդական շքեղության մեջ»²²:

Իսկ արդեն Է. դարից սկսած «մենք տեսնում ենք հայերի պայքարը կայսերական գայիստնի համար: Նամարյա յուրաքանչյուր կայսր ունեցել է իր հայ մրցակիցը: Մենք այսօր թվում ենք միայն վկայված փաստեր. 635 թ. Վահան գորավարը կայսր հռչակվեց Ներակլի փոխարեն, 644 թ. Վալենտինոս Արշակունին ապստամբեց Կոստանդ II-ի դեմ, 668 թ. Մեղեգիոս (հայ. Մժեժ) գորավարը կայսր հռչակվեց Կոստանդին IV-ի փոխարեն, Փիլիպիկոս Վարդանը թագավորել է 711-713 թթ., Արտավազդ կյուրոպաղապը՝ 742 թ., Ալեքսիոս Մուզլեկ գորավարը՝ 790 թ., 803 թ. կայսր է հռչակվել Վարդան մոնոսպրապրեզորը, 808 թ. Արշավիր քվեաբորը, 813-820 թթ. գաեռ գրադեցրել է Լեոն Նայկագը, Թովմա Ապստամբը՝ 821-822 թթ., Մամիկոնյան իշխանուհի Թեոդորան կայսրուհի էր 842-857 թթ., Վարդան ամենակարող էր 856-866 թթ., վերջապես Վասիլը թագավորել է 867-886 թվականին»²³: Իսկ ինչպես հայտնի է, եւ ինչպես միաեամու ընդունում են բոլորը, Բյուզանդական կայսրությունն իր գինվորական ու մշակութային մեծության գագաթնակետը բարձրացավ Վասիլի հիմնադրած Մակեդոնական փառավոր հարստության օրոք՝ հարստություն, որն «իրապես հայկական էր»²⁴:

Դեռևս Ադոնցից առաջ ֆրանսիացի նշանավոր պարմաբան Ալֆրեդ Ռամբոն (1842-1905) Բյուզանդիայի պարմությանը նվիրված իր հայտնի ուսումնասիրությունում²⁵ շեշտել էր հայերի այդ դերը՝ գրելով, թե Թ.-Ժ. դարերի ընթացքում հայերն արդեն փեր էին դարձել կայսրությանը եւ ամեն փեղ հայեր միայն կրեսնվելին : Առանց հայագնի Վասիլին իսլամությունը Եւրոպայի վրայով պիտի անցներ, քարոքանդ անելով ամեն ինչ : Վասիլ մեծագործ կայսրի հետ ապարեզ բարձրացան նաեւ այնպիսի հզոր հայ ընդանիքները, ինչպիսիք էին Լեկապեոսներ, Գուրգուսներ, Չմշկիկներ, Փոկասներ, Սկլերոսներ, որոնք «իրենց հերոսական ժեսթով [իմա՝ սխրանքներով - Պ.Ն.] սպեղծեցին մեծ դյուցազներությունը, հավիթենական փառքը Բյուզանդիանի»²⁶: Ա. Ռամբոյին երկրորդում է Ն. Գեյցերը. «Նայոց ազգի քաջ եւ խելացի որդիները Արեւելահռոմեական պետության (այսինքն՝ Բյուզանդիայի - Պ. Ն.) թե՛ բարձր գինվորական շրջաններում եւ թե՛ կայսերական դիվանում արժանացել էին ամենաազդեցիկ եւ ղեկավարող պաշտոնների եւ վարում էին ամենաարժանավոր եղանակով»²⁷: Ամենաերեւելի բյուզանդագետներից մեկը՝ Շառլ Դիլը սպիտակված էր խոստովանել. «Նայ ազնվականությունը հաճույքով էր ծառայության մարմուն կայսերական բանակ, եւ այդ արկածախնդիրներից ոմանց հաջողվեց հասնել փայլուն դիրքերի: Բյուզանդիան Նայասարանին է պարտական բազում լավագույն գորավարների, արքայազն կառավարիչների, մինչեւ անգամ շատ կայսրերի համար. նրանցից էին՝ Ներակլեոսը Է. դարում,

22 Ն. Ադոնց, Երկեր, հայր. Ա, էջ 216-217:

23 Ն. Ադոնց, Երկեր, հայր. Ե, էջ 173:

24 Ն. Ադոնց, Երկեր, հայր. Բ, էջ 149: «Մակեդոնական հարստության հայկական ծագման մասին ցի կարելի կասկածել»,- անվարան պնդում է գերմանացի պարմաբան Նայնիխ Գեյցերը (տես Ն. Գեյցեր, Նամառություն բյուզանդական կայսրերի պարմության, Վաղարշապատ, 1901, էջ 215):

25 Տես A. Rambaud, L'Empire grec au X^e siècle. Constantin Porphyrogennète, Paris, 1870.

26 Ն. Ադոնց, Երկեր, հայր. Բ, էջ 49-50:

27 Տես Ն. Գեյցեր, նշվ. աշխ., էջ 215:

Լեւոն Նայկազը Թ. դարում, Ռոմանոս Լակապենոսը և Նովիանոս Չմշկիկը Ժ. դարում: Չպետք է մոռանալ նաև հայագգի հրաշալի գինվորներին : Ժ. դ. հայկական գնդերը կայսրության լավագույն զորամիավորումներից էին»²⁸:

Այնուհանդերձ, Ն. Ադոնցի նպատակը չի եղել միայն բյուզանդական այս կամ այն գործչի հայկական ծագման հարցի քննարկումն ու պարզաբանումը: Ականավոր պարմաբանը խորհում էր պարմական կարեգործիներով՝ երբեք փութք չտալով ազգայնամոլական կոնյունկտուրային: Նրան հետաքրքրել է շար ավելի կարևոր մի պարմական երևույթ՝ հայ ժողովրդական լայն գանգվածների և մասնավորապես նախաքարական ընդհանրության արագադրի առաջին (Ե.-Է. դդ.) և երկրորդ (Է.-Ժ. դդ.) փուլերը, երբ, ինչպես գրում է Կ.Ն.Յուզբաշյանը, «լքելով հայրենիքը, հայ ազատամարտի ապաստան է գտնում բյուզանդական գանի շուրջը և փոխելով դավանանքը, դառնում բյուզանդական վերնախավի կարևոր բաղկացուցիչ փարքը: Այսպիսով, նա (Ադոնցը - Պ. Ն.) կարողանում է երևան հանել պարմական մի երևույթ, որը հավասար չափով կարևոր է Նայսապոսի ու Բյուզանդիայի արաբքին հարաբերությունները և ներքին կյանքը ուսումնասիրելու համար»²⁹:

Նայ-բյուզանդական հարաբերություններում շրջադարձն սկսվեց այն պահից, երբ կայսրությունը ԺԱ. դարի կեսերից սկսեց վարել շեշտված հայահալած քաղաքականություն: Նախ սկսեցին հալածել բոլոր այլադավաններին և առաջին հերթին՝ Դիպոկ է նկարել Ն.Ադոնցը, որ «հանդուրժողականությունը քրիստոնեական մեծ կայսրության առաքինություններից չէր»: Նայերի նկարմամբ գործադրվող դավանական ու ազգային բռնություններն ընդունել էին այնպիսի ձևեր, որոնք «ամենին պարիվ չէին բերում խելամիտ քաղաքականությանը: Նույն լինելով իր նպատակին հասնելուց՝ այն, ընդհակառակը, հրահրել է վճռական հակազդեցություն: Իր իրավունքները, իր և իր ժողովրդի գոյությունը պաշտպանելու համար՝ Նայոց եկեղեցին գինվել է»: Ներսեանքները ողբերգական եղանակով հենց Բյուզանդիայի համար: Նայերի դեմ կայսրության հռչակած պայքարը «իր իսկ համար ունեցել է կործանարար հետևանքներ: Այն հայերին խոտորելու էր և վանելու կայսրությունից, դրդելու նրանց կենտրոնական Տարսուսում անկախության դրոշմ պարզելու գաղափարի վրա: Ուստի կայսրությունը միայն ցամաքեցրել է դարեր շարունակ իր գինվորական փառքն ապահովող աղբյուրը»³⁰: Մյուս կողմից՝ Բյուզանդիան անհետապետքեն ջանք չի խնայել կործանելու հայկական պերականության բոլոր ուշանավոր կենտրոնները (Տարսոս, Տայք, Վասպուրական), մասնավորապես Բագրատունիներին՝ Անիում և Կարսում: Նայերի դեմ Բյուզանդիայի վարած անմիտ քաղաքականությունը հարկապես «ավելի շեշտակի է դառնում Դիոգենեսի թագավորության ընթացքում, իսկ խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանում ավարտվել է լիակատար խզումով»³¹: Արդյունքը եղավ այն, որ հայերի հոսքը դեպի Կոստանդնուպոլիս նվազեց և ապա ընդհանրապես դադարեց: Եւ «Բյուզանդիանը այլևս չարևառ ժայթքիլն այն աղբիւրին, որմէ իր մէջ հոսած էին այնքան կենսական ուժեր և գոր ինքն իսկ ցամաքեցուցած էր»: Կայսրության ծոցի մեջ հայ-հույն համերաշխության խզու-

28 Շ. Դիլ, Բյուզանդիայի պարմության հիմնական դրոշմները, Երևան, 2005, էջ 134:

29 Կ. Ն. Յուզբաշյան, Նիկողայոս Ադոնցի գիտական ժառանգությունը. փե՛ն «Պարմա-բանասիրական հանդես», 1962, թ. 4, էջ 124:

30 Ն.Ադոնց, Երկեր, հատ. Ե, էջ 237-238:

31 Անդ, էջ 512:

մը, - եզրակացնում է պարմաբանը, - «կնշանակե այն թվականը, երբ Բյուզանդիոն սկսավ սահիլ դեպի անկում»³²: Ն. Աղոնցն առաջինը չէր, որ եկել էր նման պարասխանաբան եզրակացության: Ինքը՝ Շ. Դիլն էր, որ ավելի վաղ ստիպված էր խոստովանել. Նայասպանի բյուզանդական նվաճումը, «անշուշտ, մեծ հաջողություն էր, որը նպաստեց կայսրության թե՛ քաղաքական, թե՛ հեղինակության բարձրացմանը, սակայն այդ հաջողությունը թերևս ավելի երևութական էր, քան իրական, քանզի Նայասպանի բռնակցումով վերացավ մի միջանկյալ պետություն, որ խանգարում էր արաբական և բյուզանդական աշխարհների անմիջական շփմանը»³³: Ճիշտ է նկատել Ն. Մ. Բարթիկյանը, որ խոսքն այսպես պետք է վերաբերեր ոչ այնքան արաբական աշխարհին, որքան թուրքական. «Բյուզանդական դիվանագիտության կայսրայալ ֆիասկոն երևաց ԺԱ. դարի սկզբին, երբ նա չնկատեց, թե ինչ է կայսրավում Կասպից ծովից արևելք, չնկատեց վերահաս թուրքական վտանգը: Վերացնելով հայոց պետականությունը և լուծարելով հայկական բանակը, նա փաստորեն թուրքերի առաջ լայնորեն բացեց Նայասպանի, ապա և բյուզանդական կայսրության դռները»³⁴:

Ճիշտ է և այն, որ հայերի նկատմամբ հույների անգուսպ արելության պարճառը միայն երկու ժողովուրդների դավանական տարբերությունը չէր, այլ կայսրության քաղաքական կյանքում գերիշխանության հասնելու համար մղվող անզիջում պայքարը: Արելության պարճառը, եզրափակում է Ն. Աղոնցը, - իրավամբ «հույների հեղափոխական հաղթանակող մրցակցությունն էր ռազմական և քաղաքական կյանքում»: Այս լույսի ներքո պարահական չպետք է համարել հայերին վերաբերող Թ. դարի բյուզանդական բանաստեղծուհի Կասիա Միանձնուհու պարսավագրի արելությամբ լի հերեյալ քողերը՝

Նայոց զարհուրելի ազգը

պարիք է և չարաբար վերին ասարիճանի.

այլև իսկացնոր, փոփոխամիպ և նախանձուր,

խիստ փրված և լի նենգությամբ³⁵:

Ն. Աղոնցը համոզված է, որ Կասիա Միանձնուհու սույն քողերը անհապական քննադատական չեն, այլ մի «ընդհանուր հայացք, որ ունեն բյուզանդական հույները հայոց վերաբերմամբ. ներշնչված այն չարախնդրությամբ և նախանձով, որով նոքա նայում էին հայերի փայլուն հաջողության հասարակական և քաղաքական կյանքի ամեն ասպարեզներում»³⁶:

Կասիա Միանձնուհին միակը չէր : Նայերի նկատմամբ նման վերաբերմունք են որդեգրել նաև բյուզանդական այլ մարենագիրներ, անգամ նոր ժամանակների հույն ու երոսպացի որոշ ուսումնասիրողներ: Այդ կասկածությամբ է, որ Ն. Աղոնցը մարմանաշունչ է հույն բյուզանդագետ Կ. Սաթասի միտումնավոր քննադատությանը Բյուզանդիայի կյանքում հայերի խաղացած դերի մասին: «Արաբների դեմ վարած իր պարերազմների ժամանակ Ներակլիոս կայսրը փոփոխություններ մտցրեց ակրիպասների (սահմանապահ - Պ. Ն.) զորի մեջ, բայց այսպես, դժբախտաբար, սողոսկեցին բազմաթիվ վարձկան ուրացողներ: Մակեդոնական հարսությունը պարկանող կայսրերը սահմանների պահպանությունը վստահեցին հայե-

32 Ն. Աղոնց, Երկեր, հատ. Բ, էջ 51:

33 Շ. Դիլ, նշվ. աշխ., էջ 135:

34 Ն. Բարթիկյան, Շառլ Դիլ. փե՞ս Շ. Դիլ, նշվ. աշխ., էջ XXIV-XXV:

35 Ն. Աղոնց, Երկեր, հատ. Ե, էջ 45:

36 Անդ, էջ 47:

րին, որոնք, սակայն, իրենց նկատմամբ ցուցաբերած վստահությունը չարդարացրեցին: Այդ վարձկանները Բյուզանդիայի նկատմամբ չհապուցված հին քնն ունեին, որ հաճախ վրանգավոր կերպով բոցավառվում էր, և մենք բազմիցս փեսնում ենք նրանց դաշնակցած հակառակորդներին (նկատի ունի արաբներին - Պ. Ն.), որոնց դեմ վարձկանները պետք է, որ հակադրեին անառիկ մի պարունեշ»³⁷:

Վճռականորեն մերժելով «Դիգենիա Ալեքսիաս» դյուցազներգության հրապարակիչներ Կ. Սաթասի և Է. Լեգրանի նման մրայնության դրսևորումները՝ Ն. Ադոնցը նշում է, թե ոչինչ չի արդարացնում այդպիսի անհարիր կարծիքը. «սա անարդարացի և թյուր կարծիք է, ուր զուր անձնական զգացմունքները գերակշռում են ողջախոհության վրա»³⁸: Պատճառն այն է, որ Կ. Սաթասը և Է. Լեգրանը, ինչպես նաև այլ ուսումնասիրողներ մի փեսակ նախապաշարմունքի գոն են դարձել, որի հետևանքով ճշմարտությունը կեղծվել է, իսկ պատմական հերազմության համար անհրաժեշտ անկողմնապահությունը փողի է փվել հելլենական հայրենասիրության պաթոսին³⁹:

Անշուշտ, Ն. Ադոնցի բյուզանդագիտական հերազմությունները թարմ հոսանք էին, որ դրական լիցք հաղորդեցին կարարվելիք ուսումնասիրություններին: Բայց հանուն արդարության պետք է նաև նշել, որ ուսումնասիրողները նրա երկերում գտնում են մի շարք անճշտություններ. չարդարացված սպուգաբանություններ, ոչ ճշգրիտ մեջբերումներ և հղումներ, կամ երբեմն անհրաժեշտ հղումների բացակայություն, առանձին շրապողական եզրակացություններ և այլն⁴⁰: Պետք է նաև հաշվի առնել, որ Ն. Ադոնցի ուսումնասիրությունները իր դարի արգասիքներ են, իսկ գիտությունը շարունակ զարգանում է, և նոր գիտելիքի հերքում է նաև նոր փեսություններ:

Սակայն այս ամենը, ինչպես ճիշտ նկատել է Ժ. Գարիպը, բնավ չի նսեմացնում Ն. Ադոնցի գիտական ժառանգության նշանակությունը. «Ամբողջության մեջ Ադոնցի հայ-բյուզանդական ուսումնասիրությունները և նրա եզրակացություններն անուրանալի են և ընդունվել ու ըստ արժանիքի են գնահատվել Բյուզանդիայի ընդհանուր պատմությանը նվիրված ուսումնասիրությունների հեղինակների կողմից»⁴¹: Դեռևս 1933 թ. Ադոնցի վաստակի գնահատման խոսքում Ա. Գրեգուարը մատնանշել էր. «Այն պահից ի վեր, ինչ Ադոնցը մեզ հետ է, Բյուզանդիայի պատմությունը դիտարկվում է նոր լույսի ներքո: Լուծումների ակնհայտ պարզությամբ ու բերած նոր փաստերի առաքությամբ նրա ուսումնասիրությունները հիացրել են մասնագետներին և ապացուցել հայագիտության անվերապահ կարևորությունը, որ, ի մեծ ավստանք, բյուզանդագետները աչքաթող էին արել»⁴²: Ավելի ուշ, Ադոնցի հիշատակի առթիվ գրված երախտիքի խոսքում Գրեգուարը շեշտել է. «Առանց վարանելու, որ կարող է դիտվել որպես ազգայնական արմենոման, աներևակայելի սրեղծագործական երևու-

37 Անդ, էջ 98: «Վարձկան» եզրը օգտագործում է նաև Ն. Գեյցերը (փն/ս Ն. Գեյցեր, նշվ. աշխ., էջ 134):

38 Անդ:

39 Անդ, էջ 83:

40 Տե՛ս «Corpus Scriptorum christianorum Orientalium», vol. 132, Louvain, 1952, էջ 393-394; «Le Musnon», t. 71, 1958, էջ 256-257, «Byzantinische Zeitschrift», t. 35, էջ 489-490; t. 37, 1937, էջ 219-220; t. 39, 1939, էջ 257-258 և այլն:

41 Գ.Գարիտե, էջ 4-5:

42 Տե՛ս «Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire Orientales et Slaves», t. 3 (1933), Bruxelles, 1935, էջ 630-631:

կայությամբ, հերետոքականությամբ ու եռանդով ... Ադոնցը Բյուզանդիայում, նույնիսկ բուլղարների մոտ փնտրում էր ու գտնում հայերի, ... որոնց հայկական ծագման վերաբերյալ բյուզանդագետների բազմաթիվ սերունդներ հերետոքականորեն աչք էին փակում, ... հայեր, որոնց հանճարն է բազմաթիվ դեպքերում փրկել, ուրքի կանգնեցրել, ամրապնդել ու երիտասարդացրել մի կայսրություն, որն ինչպես Ադոնցն էր նախընտրում, որոշ դարաշրջաններում իրավացիորեն արժանի է կրելու Բյուզանդա-հայկական անունը: Իսկ մենք, ավանդ, հանդիսավի հեզնաժպտացել ենք այդ լսելով»⁴³:

Նշվածով չեն սահմանափակվում Ադոնցի բյուզանդագիտական ժառանգության էջերը: Բյուզանդագիտական նշանակություն ունեցող նյութեր կան նաև պարմաբանի չիրապարակված ձեռագրերում, որոնք գտնվում են նրա բեյրության թողնում ու, թեև սևագիր ու անավարտ, զգալի հերաքրքրություն են ներկայացնում⁴⁴:

43 Անդ, t. 7 (1939-1944), New York, 1944, էջ 503:

44 Տե՛ս Համագալսի՝ Բեյրութի գրական պահոց, Պրոֆ. Նիկողայոս Ադոնցի թողուն, 1) «Հուսփինիանոսի ժամանակաշրջանի նշանավոր հայերը»՝ ա) Արարավազ, բ) Արարական Արշակունի, գ) 548 թ. դավադրությունը, դ) Ներսես և Իսահակ Կամսարականներ, ե) Վարագափրոց, զ) Նայկական այրուձին Բարախայում, է) Իսահակ Կամսարական ու նրա բանակը, ը) Գլակ Նայր, թ) Հովհաննես Արշակունի (ռուսերեն, ձեռագիր, անավարտ, 70 էջ), 2) «Նայոց վերջին Արշակունիների ճակարագիրը. Արշակունիները Բյուզանդիայում» (ռուսերեն, ձեռագիր, բազում էջեր թափված, անկանոն, խառնիխառն տարբեր թղթածրարներում), 3) «Նայ-բյուզանդական հարաբերությունների պարմության ուսումնասիրության անհրաժեշտությունը. արդի հայագիտության և բյուզանդագիտության զարգացման հեռանկարները» (ռուսերեն, ձեռագիր, անավարտ, 10 էջ), 4) «Նայ-մակեդոնական հարսության պարմությունը» (հայերեն, ձեռագիր, խառնիխառն թղթեր, նոթեր, նյութեր. կանոնավոր շարադրանքը միայն «Վասիլ Նայկագն» (էջ 28-53, 59-64), անավարտ, 80 էջ), 5) «Դիգենիա Ալրիքաս հայ-բյուզանդական էպոսը» (ռուսերեն, ձեռագիր, անավարտ, 46 էջ), 6) «Փիլարպոս և Գող Վասիլ» (ֆրանսերեն, ձեռագիր, անավարտ, նյութեր, 23 էջ), 7) «Բյուզանդիայի հայագնի կայսր Լևոն V-ի ծագման մասին» (ֆրանսերեն, ձեռագիր, անավարտ, 20 էջ) և այլն: Հույս ունենանք, որ սրանք մի օր ես կարժանանան պարզաճ հրապարակության: